


У. Ч. ЦГРЛ-УШБЗУЗ





They're not only rich

Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ



ԵՐԵՎԱՆ «ՀԱՅԱՍՏԱՆ» 1989

Գրախոսների՝ պատմական գիտությունների
դոկտոր Լ. Ա. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ, պատմա-
կան գիտությունների թեկնածու Ռ. Պ.
ԿՈՆՎԱԿՉՅԱՆ, խմբագիր՝ Կ. Ս. ՎԱՐ-
ԴԱՆՑԱՆ

Գրքի անունը
և հեղինակը

164799

Արզումանյան Մ. Վ.

Ա 866 Դարավոր Գոյամարտ [խմբ.՝ Կ. Ս. Վարդանյան]. — Եր.: Հայաս-
տան, 1989. — 768 էջ, 1 թ. նկ.:

Գիրքը նվիրված է հայ ժողովրդի, մասնավորապես նրա արևմտահայ հատվածի
ճակատագրին, որը սկսած սելջուկների թալանչիական պատերազմների ժամա-
նակներից մինչև նոր և նորագույն ժամանակները գտնվել է թուրքական բռնակա-
լության արյունոտ ճիրաններում: Տրվում է հայկական հարցի ծագման պատ-
մությունը և լուսաբանվում սփյուռքահայերի գոյության պայքարը կապիտալիս-
տական երկրներում: Հատկապես ընդգծված է սովետական իշխանության դերը
հայ ժողովրդի ազատագրման գործում և սփյուռքահայերի հայրենադարձության
փրկարար նշանակությունը:

Նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

0505040000

Ա 701(01)89 49—88

ԳՄԴ 63.3(22)

ISBN 5—540—00050—1

© «Հայաստան» հրատարակչություն, 1989



Ներածություն

Ներկայումս աշխարհում կան ավելի քան երկու հազար տարբեր ժողովուրդներ, որոնք ունեն իրենց տեղն ու դերը մարդկության մշտահուով համայնապատկերում: Միաժամանակ պատմությանը հայտնի են բազմաթիվ ժողովուրդներ, որոնք չեն դիմացել ժամանակի փորձություններին և անհետացել են, ոչնչացվել կամ ձուլվել այլ ժողովուրդներին: Այդպիսիք էին, օրինակ, նույնիսկ մեծաթիվ բարեխոնացիներն ու ասորեստանցիները, որոնք ժամանակին ստեղծել էին հզոր պետություններ: Մինչդեռ, ասենք, համեմատաբար փոքրաթիվ հայ ժողովուրդը դիմացավ բազում արհավիրքների և պահպանեց իր գոյությունն ու ազգային նկարագիրը: Աշխարհում հազվագեղ է նման օրինակները: Իրոք, հայ ժողովուրդը, օտար նվաճողների և մասնավորապես թուրք զավթիչների հանցանքով, ապրեց երկարատև դժոխային կացություն, բայց և մաքառեց ու մղեց հերոսական գոյամարտ:

Ինչպե՞ս բացատրել այդ երևույթը, այսինքն՝ այն, որ շատ ժողովուրդներ հարատևում են, իսկ ոմանք էլ անհետանում: Իհարկե, դա չի կարելի բացատրել ինչ-որ աստվածային նախախնամությամբ, կրոնական կամ միստիկական ճակատագրով, որպիսին չի եղել, չկա ու չի կարող լինել: Բայց որ ժողովուրդներն ունեն պատմական բախտ, դա անառարկելի ճշմարտություն է: Այդ բախտն, իրոք, պատմական է, պայմանավորված պատմական հանգամանքներով և ներառում է օբյեկտիվ պայմաններ ու սուբյեկտիվ գործոններ: Ժողովուրդների պատմական բախտը ձևավորվում է նրանց կյանքի ներքին ու արտաքին պայմանների ամբողջությամբ և դրա մեջ նրանց բազմազան ընդունակությունների ու գործունեության դրսևորմամբ:

Հայ ժողովրդի պատմական բախտը, նրա կյանքի ուղին ձևավորվել են Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացմամբ, բազ-

մապիսի թշնամիների դեմ մղած դարավոր պայքարով: Իր էությամբ դա նույնատիպ է ուրիշ ժողովուրդների պատմությանը և մարդկային հասարակության զարգացման ընդհանուր օրինաչափությունները տարածվում են բոլորի վրա: Դրանով հանդերձ շին բացառվում ժողովուրդների միջև եղած տարբերություններն ու առանձնահատկությունները, որոնք արդյունք են նրանց կյանքի ու զարգացման կոնկրետ պայմանների: Հայ ժողովրդի պատմական բախտը, օտարերկրյա նվաճողների հանցանքով, շատ է շեղվել իր բնականոն ընթացքից և դաժանորեն բռնադատվել, ունեցել շատ ծանր հետևանքներ:

Հայ ժողովրդի պատմական ուղին սկսվում է նրա ծագումից (գենեզիս): Մի ժամանակ այն սխալ կարծիքը կար, թե իբր հայերը (նրանց նախնիները) եկվորներ են: Այդ թյուրիմացությունը դարձավ քաղաքական կեղտոտ գենք հատկապես իրոք եկվոր թուրքերի ձեռքին, որպեսզի «ապացուցեն» իրենց այսպես կոչված «հնամենի տիրապետությունը» հայերի երկրում: Այժմ մեկընդմիշտ վերջ է տրված այդ վարկածին և բոլորովին անհեթեթ է թուրքական պռչավոր սուտը:

Իրականում հայ ժողովուրդը ոչ միայն պատկանում է աշխարհի հնագույն կուլտուրական ժողովուրդների թվին, այլև անդրենածին է, տեղաբնիկ (ավտոխտոն, աբորիգեն) և կազմավորվել է Հայկական լեռնաշխարհում, որը հանդիսացել է մարդկության առաջին բնակավայրերից ու քաղաքակրթության օրրաններից մեկը: Այստեղ էլ նա ապրել է հասարակական-տնտեսական բոլոր ֆորմացիաները:

Հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին և գիտության նորագույն տվյալները հաստատում են, որ դրա նախահայրենիքը տեղադրվում է ոչ թե Եվրոպայում (մեծ մասամբ նշվում է Բալկանյան թերակղզին), ինչպես ենթադրում էին նախկինում, այլ «Արևելյան Անատոլիայում, Հարավային Կովկասում ու Հյուսիսային Միջագետքում» (25, հ. II, էջ 895), այսինքն՝ Փոքր Ասիայի արևելյան մասում, Հայկական լեռնաշխարհում (Հարավային Կովկասում) և Իրանական բարձրավանդակի հյուսիս-արևմուտքում: Այդ մեծ ռեգիոնում էլ մ. թ. ա. V—IV հազարամյակներում հնդեվրոպական նախամայր լեզուն տրոհվեց առանձին բարբառների, որոնք հետո կազմավորվեցին որպես ինքնուրույն լեզուներ: Հնդեվրոպական ցեղախմբերը կա՛մ մնում էին տեղում և կա՛մ շարժվում դեպի արևելք ու արևմուտք: Հայերը մնացին ու տարածվեցին իրենց իսկ նախահայրենիքում՝ Հայկական բարձրավանդակում և հազարամյակներ շարունակ մնացին նրա մշտական բնակիչները:

Նկատենք, որ այս նոր տեսությունից առաջ էլ գիտականորեն հավաստ-

վել է հայերի տեղաբնիկութիւնը և դա է հայ ժողովրդի կազմավորման հարցի ճշմարիտ հետազոտման ելակետային սկզբունքը: Հայերի տեղաբնիկութիւնը հաստատվում է նրանց լեզվով, ժամանակի, կյանքի բուսական ու կենդանական աշխարհի արտացոլումով, նյութական ու մշակութային արժեքներով, որոնք հավաստվում են հնագիտակա՞նց պեղումների արդյունքներով ու զանազան հայտնագործումներով, ինչպես նաև մարդաբանութեան տվյալներով: Հայկական լեռնաշխարհում ու հարակից երկրներում դեռ վաղնջական ժամանակներից տարածված էր «արմենոիդ» կամ առաջավորասիական մարդաբանական տիպը, որի ցայտուն կրողները ներկայումս հայերն են: Նրանք մտնում են եվրոպեոիդ ոսսայի հարավային խմբի մեջ:

Հայերը, որպես էթնոս, ժողովուրդ, ձևավորվել են Հայկական լեռնաշխարհում, որն ունի մոտ 400 հազար կմ² տարածք: Այն ծաւալվում է Փոքր Կովկասի լեռնաստանից մինչև Կորդվաց ու Մասիուս լեռները, Ուրմիա լճից ու Ղարաբաղի լեռներից մինչև Անտիտավրոս ու Պոնտական լեռնաշղթաները: Հայկական լեռնաշխարհն աչքի է ընկնում իր բնութեան ու բնակլիմայական պայմանների բազմազանութեամբ, ջրառատութեամբ, բուսական ու կենդանական հարուստ աշխարհով, բնական հանքավայրերով: Հայերը մեծագույն հմտութեամբ են օգտագործել իրենց աշխարհի բնական բարիքներն ու հնարավորութիւնները:

Հայերի առաջացման և որպես ժողովրդի կազմավորման ու զարգացման օրրանը Հայկական լեռնաշխարհն է, որը միաժամանակ պետք է դիտել որպես պատմական Հայաստան կամ ուղղակի Հայաստան: Իհարկե, չի կարելի դա պատկերացնել պարզունակ ձևով, թե հենց սկզբից հայերն ամբողջութեամբ հանդես եկան «գտարյուն» ձևով ու զբաղեցրին ողջ Հայկական լեռնաշխարհը: Բոլորովին էլ ո՛չ: Բայց արդեն բրոնզի դարում (մ. թ. ա. III—II հազարամյակներում) նրանք ոչ միայն ունեին իրենց ինքնուրույն լեզուն, այլև բավականին բազմամարդ էին ու բնակեցված Հայկական լեռնաշխարհում, Հայաստանում: Իհարկե, կային նաև այլ ցեղեր, բայց դոմինանտը պատկանում էր հայերին, այլ կերպ նրանք կկորչեին, կծուլվեին ուրիշների հետ, կկորցնեին իրենց լեզուն: Մինչդեռ հայտնի է, որ դա տեղի չի ունեցել և, ընդհակառակը, զնայով հայերն ավելի են ստվարացել, ստեղծել ցեղային միութիւններ ու պետական կազմավորումներ, միասնական պետութիւն: Անշուշտ, դա եղել է երկարատև ու բարդ պրոցես, երբ Հայկական լեռնաշխարհում, պատմական Հայաստանի ընդհանուր ավազանում բազմաթիվ խայտաբղետ ցեղերից ու նրանց միութիւններից խմորվել ու ձևավորվել է ամբողջական և միալեզու հայ ժողովուրդը: Այդ ցեղերը հիմնականում եղել են

հնդեվրոպական ծագումով, բայց կային նաև ոչ հնդեվրոպական, որն իր արտացոլումն է գտնում հայոց լեզվում: Իրանով իսկ նրանք, ինչպես էլ կոչված լինեին, օրգանապես դարձել են հայ ժողովրդի կազմավորման բաղադրատարրեր և նրանց պատմությունն էլ պետք է տրվի այդպիսի ընդհանրական դիմամիզմի մեջ:

Անշուշտ, ինչպես ամեն մի գիտություն, պատմությունը ևս հենվում է փաստերի վրա, բայց այդ փաստերը պետք է հետազոտվեն ոչ թե մեկուսի, այլ ընդհանրական կապի մեջ, ժողովվեն ու վերլուծվեն համապատասխան պրոբլեմների լուսաբանման տեսանկյունով: Տրանսիացի նշանավոր պատմաբան Մարկ Բլոկն արդարացիորեն գրել է. «Պրոբլեմները որքան շատ իշխեն փաստերի վրա, այնքան մեր հետազոտությունները շատ կմոտենան այն բանին, ինչը սոցիալական գիտություններում համարվում է պատմության իսկական խնդիրը» (26, էջ 220): Պրոբլեմային մտածելակերպը պատմաբանին օժտում է նաև սոցիոլոգիական հզոր լիցքով, նրան առավել ևս տալիս գիտական ընդհանրացման մեծ ուժ: Տվյալ դեպքում մեզ համար պարզ է պրոբլեմը՝ հայ ժողովրդի ծագման ու առաջացման հարցը, որի պատասխանի հիմքում կարելի է դնել ակնավոր պատմաբան Ս. Տ. Երեմյանի հիմնադրար գրույթը. «Հայ ժողովուրդը Հայկական լեռնաշխարհի առաջին իրական ու կայուն ժողովուրդն էր» (4, հ. 1, էջ 190): Նա տեղաբնիկ է ու մշտապես հարատևող:

Այդ գաղափարներն էլ պետք է կազմեն հայ ժողովրդի ծագման ու կազմավորման պրոբլեմի հետազոտման առանցքը, որով և ճիշտ կարտացոլվի իրական պատմությունը: Իրոք, Հայկական լեռնաշխարհի առաջին ու կայուն ժողովուրդը եղել են տեղաբնիկ հայերը: Աս է պրոբլեմի բուն էությունը, որին պետք է ենթարկվեն մնացած բոլոր հարցերը: Ուստի այնտեղի բազմաթիվ ցեղերի պատմությունը պետք է շարադրվի այդ ոգով, տրվի նրանց համոզիչ միավորումը (հիմնականում փոխադարձ կապերով ու մերձեցմամբ, համեմատաբար վաղ ձևավորված ու «հրդկված», գուցե և այդ պատճառով ավելի դյուրամատչելի հայերենի յուրացմամբ և այլն) մի (հայ) ժողովրդի մեջ: Մինչդեռ ոմանք այդ ցեղերին մեկուսացնում են, «օտարացնում» Շայերին, փաստորեն դարձնում նույնիսկ առանձին ժողովուրդներ, իսկ հետո միանգամից «ծնում» հայ ժողովրդին ու հայկական պետականությունը, ինչպես Մինեթվան Յուպիտերի գլխից:

Իրականությանը հավատարիմ է մնացել հանճարեղ պատմաբան Մովսես Խորենացին, որի ելակետային դրույթն էր հայերի տեղաբնիկությունը, նրանց, որպես ժողովրդի, ձևավորումն ու զարգացումը Հայ-

կական լեռնաշխարհում, Հայաստանում: Նրա հաղորդամար, հայերի անվանագիրը (էպոնիմը) նրանց մեծ նախորդ (գուցե և աստվածացրած) Հայկն է, խսկ օտարները հայերին կոչել են արմեններ՝ Հայկի հաջորդներից Արամի անվամբ: Հայերի ինքնանվանումից պիտի բխեր նրանց երկրի անունը՝ Հայք կամ Հայաստան (օտար լեզուներով՝ Արմենիա): Քերթնողահայրը միաթամանակ ցույց է տալիս, որ վաղնջական ժամանակներից սկսած հայկականությունը չի ընդհատվել, այլ, փոքր ելևէջներով հանդերձ, շարունակվել է վերընթաց գծով: Այդ պրոցեսն սկսվում է նախահայերից, որոնց մեջ մտել են բազմապիսի ու բազմաբեզու ցեղեր, և ավարտվել հայ ժողովրդի կազմավորմամբ: Հայերի առաջին դինաստիան փազմել են Հայկյանները և կամ Հայկազունք, որն ունեցել է երկաթաժամ գոյություն՝ իշխանությունների ու թագավորությունների ձևով: Պատմահոր այս բոլոր բացատրություններն ավելի հավաստի են ու համոզիչ, քան հետագայի այլևայլ փորձերը, որոնք ավելի շատ խեղաթյուրումներ են:

Հայաստանի ու հայկական պետության մասին մեզ հասած առաջին հավաստի գրավոր տեղեկությունները հաղորդում են խեթական սեպագիր արձանագրությունները մ.թ.ա. II հազարամյակի կեսերին: Դրանցում հիշատակվում է Հայասա, որպես հայերի երկիր ու հայկական պետություն: «Haiasa» տեղանունը (տոպոնիմ) կազմված է «Hai» (Հայ) հայերեն անունից և «asa» (ասա) խեթական տեղանվանային վերջածանցից, որը համազոր է հայերեն «ք» (Հայք) և «ստան» (Հայա-ստան) ածանցներին: Մշահավոր լեզվաբան Գ. Ղափանցյանը Հայասան համարել է հայերի բնօրրանը և գրել նույնանուն աշխատություն («Հայասան— հայերի բնօրրան», 1947): Նրա հետ լիովին համահիտ անվանի վիտնական Վ. Վ. Իվանովն իր հերթին հաստատում է Հայասա տեղանվան և հայ ինքնանվան առնչությունը: Նա գրում է. «Նորագույն հայտնագործությունները... հաստատում են Գ. Ա. Ղափանցյանի եզրակացությունների ճշգրտությունը և Ի. Մ. Դյակոնովի բոլոր հորինվածքների սխալականությունը՝ hai < hat և հայերի ծագումնաբանության մյուս հարցերի վերաբերյալ» (13, 1983, № 4, էջ 30):

Այնուամենայնիվ, թվում է նաև, որ ճիշտ չի լինի, «Հայ» անվան ծագումը կապել Հայասայի հետ. ընդհակառակը՝ Հայասան է կապվում Հայի հետ: ԶԷ որ հայոց լեզվի ինքնուրույնությունն սկսվում է մ.թ.ա. III հազարամյակից և պետք է ենթադրել, որ գոնե այդ (եթե ոչ ավելի հին) ժամանակներից հայերն իրենց ու իրենց երկիրը կոչել են որոշակի անուններով, իհարկե, հայ և Հայք (Հայաստան), փնչաբա նշել է Մովսես Խորենացին: Պետք է նկատի ունենալ նաև, որ մարդիկ են տեղաներին

անուն տալիս կամ նրանց անունով կոչում այն և ոչ թե հակառակը: Խեթերը Հայաստան կոչեցին՝ այն դիտելով որպես հայերի երկիր, Հայք, Հայաստան, գուցե և վերջինիս այսպես ասած խեթական թարգմանությունամբ (սլաւոնացիներով հայերեն «Հայ» անունը և ոչ թե իրենք նրանց առաջինը «Հայ» կոչելով, ինչպես ենթադրում են ոմանք և «Հեթից» կամ «Հաթից» էլ բխեցնում «Հայր») ու մեզ հասած միայն խեթական գրությունամբ, քանի որ այն ժամանակվա հայերենի որևէ գրություն չկար կամ ցայժմ մենք չգիտենք:

Հայասան գտնվում էր Հայկական լեռնաշխարհում և ըստ էության Հայքն էր, Հայաստանը: Ի դեպ, կարելի է նաև ենթադրել, որ խեթերը «Հայասան» անունը գործ են ածել ավելի շուտ, քան վկայում են նրանց՝ մեզ հայտնի արձանագրությունները (գուցե՝ եղել են ավելի վաղ շրջանի նմանատիպ արձանագրություններ, որոնք կա՛մ չեն պահպանվել և կա՛մ դեռ չեն հայտնաբերվել): Ժամանակին այս ուղղությամբ մեծ աշխատանք են տարել շեխ հոշակավոր արևելագետ Բեդրեթիս Հրոզնին (1879—1952) ու նրա զինակից, Պրագայի համալսարանի պրոֆեսոր Նշան Մարտիրոսյանը (1894—1966), որոնք 1924—1925 թվականներին Թուրքիայում կատարել են արդյունավետ պեղումներ և հայտնաբերել շուրջ 2000 սեպագիր պնակիտներ, որոնք հանդիսանում են խեթական թագավորների տարեգրությունները: Դրանց և այլ նյութերի ուսումնասիրությունը լինում է խիստ արգասաբեր, որի հիման վրա կատարվում է հայերի տեղաբնիկության վերաբերյալ կարևոր եզրակացությունը: Այդ առթիվ Ն. Մարտիրոսյանը գրել է, թե «հեթացիներու արքաներուն՝ Շուպպիլուլիումի և Մուրշիլի (Մուշեղ) տարեգրությանց պատմածին նայելով մեր նախնիքը՝ Խայացիք, արդեն 16-րդ դարուն Խայաշա անունով պետություն մը կազմած են, որ այն ատեն բավական հզոր քաղաքական միավոր մը եղած է Կենտրոնական Փոքր Ասիո մեջ և քանիցս պատերազմի ելնելով Հեթական կայսրության դեմ, հաղթանակներ ալ տարած է... Ուրեմն, այն տեսությունը, թե մեր նախնիքը Թրակիայեն Փոքր Ասիա եկած են 12-րդ կամ 7-րդ դարերուն, կշրվի: Հայերը տեղաբնիկ ժողովուրդ մըն են և կարճագույն armenoid ցեղին կպատկանին» (14, 1987, № 5, էջ 11):

Շատ կարևոր է նշել, որ Հայասան սոսկ հայերի (նախահայերի) երկրի անունը չէր, այլ և հանդիսանում էր պետություն, մինչդեռ ոմանք այն համարում են սոսկ ցեղային միություն (Հայասան-Ազգի): Հայասանի պետությունը վկայում է, որ հայերն արդեն դուրս էին եկել նախնադարյան համայնական կարգերից և մտել դասակարգային հարաբերությունների շրջանը: Այնտեղ հաստատված էր «ուսումնական դեմոկրատիա»՝

իր թագավորներով: Այդ պետութիւնը գոյութիւն ունեցավ մինչև մ. թ. ա. XII դարը:

Բոլոր դեպքերում Հայասան Հայքն էր, կարելի է ասել նախնական Հայաստան, որի բնակիչները, այսինքն՝ հայերը աստիճանաբար ավելի տարածվեցին: Գնալով ըստ էութեան ընդլայնվեց Հայքը և Հայաստանը դարձավ ավելի ծավալուն, նույնիսկ անկախ նրանից, թե հետագայում ովքեր ինչպես են կոչել այն՝ նաիրի («Գետերի երկիր»), Ուրարտու («Լեռների երկիր») թե Բիանիլի (կապված Վանի հետ):

Սուր վեճեր են գնում հատկապես Ուրարտուի շուրջը: Հիմնականում «հին» մասնագետները այն համարում են ո՛չ Հայաստան և ո՛չ էլ հայկական պետութիւն, իսկ «նորերը»՝ համեմատաբար «երիտասարդները», Ուրարտուն դիտում են որպես հայկական պետութիւն բուն Հայաստանում: Հասարակական կարծիքը, հենվելով գիտութեան նոր տվյալների վրա, ավելի և ավելի է հակվում դեպի այս երկրորդ տեսակետը, թեև «հները» խստորեն համառում են իրենց կատարած սխալների վրա ու ամեն կերպ դիմադրում, բայց և հարկադրված, գոնե մասնակիորեն, նահանջում նախկին «կարծր» դիրքերից: Ուրեմն, թեև նորը, ինչպես միշտ, դժվար է հաղթահարում իր ուղին, բայց հարաճող է և կասկած չկա, որ ժամանակը գործում է հօգուտ նրա...

Տարածայնութիւնների ջրբաժան գիծն ըստ էութեան հետևյալ կազմակերպ է. հայերը տեղաբնիկ են թե՛ եկովի: Ովքեր հայերին եկվոր են համարում կամ ձևակաւոր են ընդունում, որ նրանք տեղաբնիկ են, նրանց համար «Ուրարտուն» օտար է, ոչ հայկական, իսկ ովքեր հայերին իսկապես համարում են տեղաբնիկ, «Ուրարտուն» հարազատ է, հայկական: Դրանում, իրոք, տրամաբանութիւն կա, քանզի եթե հայերը մ. թ. ա. XIII—XII դարերում կամ ավելի ուշ (ոմանք հասցնում են մինչև VII դարը) Հայկական լեռնաշխարհ են եկել Թրակիայից կամ այլ վայրերից, նրանք չէին կարող ստեղծել մի այնպիսի հզոր պետութիւն, ինչպիսին էր Ուրարտուն: Բայց եթե նրանք տեղաբնիկ էին, կարող էին ստեղծել այդպիսին և դա կլինի ու կա հայկական պետութիւն: Հենց այդպես էլ պնդում են «նորերը», ի տարբերութիւն «հների»: Իսկ վերջիններս, փաստորեն միայն ձևացնելով, որ հայերին տեղաբնիկ են համարում, փորձում են դրանով հանդերձ, ըստ էութեան իրենք իրենց հակասելով, «Ուրարտուն» կտրել Հայաստանից ու հայերից, այն դարձնելով ինչ-որ տեղից բուսած ինքնաբաժ մեծութիւն, որի կործանումից հետո միայն հայերը կարող էին դառնալ նրա «ժառանգները»: Այժմ նրանք հայերին բերում են ո՛չ թե Բալկաններից (ինչպես նախկինում), այլ Հայկական լեռնաշխարհից արևմուտք ընկած ինչ-որ վայրերից, ընդ

տրում գրում են, որ իբր այդ «խեղճ ու կրակ» «հայկական տարրը» աստիճանաբար ու աննկատելի, երբեմն էլ գերու ձևով, թափանցեց արևելք և ով հրաշք, նվաճեց հզոր «Ուրարտուն»։ Իհարկե, սա ոչ թե իրական պատմութիւնն է, այլ շինծու հեքիաթ (ի տարբերութիւն ժողովրդական հեքիաթների, որոնք ունենում են ճշմարտացի հիմք)։ Բոլորովին անհիմն են նրանց պնդումները, թե եկովի հայերը իրենց մեջ «ձուլեցին» տեղական բազմաթիվ ցեղերի և դրանցով ստեղծեցին հայ ժողովուրդը։ Սա հրեշավոր կեղծիք է։ Նրանց ասածով ստեղծվել է, օրինակ, Թուրք ժողովուրդը, երբ քոչվոր ու վայրի ռազմաշունչ թուրքերը ներխուժեցին Փոքր Ասիա ու Հայկական լեռնաշխարհ և բռնութեամբ ձուլեցին տեղաբնիկ շատ հույների, հայերի, քրդերի և այլոց։

«Հնների» քարացած պնդումներն ամբողջութեամբ հակադրվում են պատմութեան ողջ ընթացքին կամ ինչպես ասում են՝ իրերի տրամաբանութեանը։ Եթե անառարկելի է հայերի տեղաբնիկութիւնը, ապա դրա օրրանը Հայկական լեռնաշխարհն է, ուր մ. թ. ա. IX—VI դարերում գոյութիւն ունեւ Ուրարտուն։ Այդ անունն ունի ասուրական ծագում։ Իրականում դա Արարատյան թագավորութիւնն էր (ինչպես նշված է Աստվածաշնչում) կամ Վանի թագավորութիւնը։ Խորապես ճիշտ է նշանավոր պատմաբան Ն. Ադոնցը, որը գրել է, թե «Ուրարտու, հնում Ուրատրի, Կրկրի ազգային անունը չէ... Ասորեստանցիները գործածել են Ուրարտու և Նաիրի տերմինները», որոնք «պատկանում են այն աշխարհի՝ հաճախ վկայակոչված և այնքան բնորոշ օնոմաստիկային, որը մենք ժամանակավորապես կոչում ենք ուրարտական» (6, էջ 269)։ Այո՛, ժամանակավորապես, քանի որ ըստ էութեան խոսքը բուն Հայաստանի մասին է և Ն. Ադոնցն էլ շեշտել է. «Ասորեստանի պետութեան ժամանակաշրջանում Հայաստանում ծաղկում էր մի մեծ պետութիւն, որը կոչվում էր Ուրարտու կամ Արարատ, բառ, որ նույն անվան բիբլիական ձևն էր» (6, էջ 862)։ Արարատ անունն էլ դարձավ խորապես հարազատ հայերին և վերածվեց հայկականութեան նշանաբանի։ Պարզ է, որ Ուրարտուն Հայաստան է և ըստ էութեան հայկական պետութիւն, առաջին հայկական միասնական պետութիւնը Հայկական լեռնաշխարհում։ Ուրարտուն Հայաստան են համարել նաև հայ ու եվրոպական շատ գիտնականներ։

Մինչդեռ «ուրարտապաշտները» այն չեն համարում ո՛չ Հայաստան և ո՛չ էլ հայկական պետութիւն։ Նրանք Ուրարտուն պատկերում են որպես հայերին օտար պետութեան, որը, մոտ երեք հարյուրամյակ ծաղկելուց հետո, չքանում է։ Նրա տեղը միանգամից բռնանում են հայերը ու ստեղծում իրենց թագավորութիւնը։ Ուրարտուներ կոչվածներն էլ ձուլ-

վում են հայերի մեջ և լիովին անհետանում: Կարծես ամեն ինչ կատարվում էր հրաշքով թե մոգական գավազանի միջոցով:

Հստ «ուրարտապաշտների», ուրարտները, թեև ստեղծեցին հզոր տերութուն, բայց այնտեղ մեծամասնություն չեն կազմել և ժողովուրդ էլ չեն դարձել: Այգպես, հայտնի ուրարտագետ ակադեմիկոս Ք. Ք. Պիոտրովսկին գրում է, որ «ուրարտները... իրենց պետության մեջ չէին կազմում բնակչության մեծամասնությունը» (18, էջ 121): Նույն միտքը կրկնում են հայ ուրարտագետները. «Ուրարտացիներն իրենց ստեղծած պետության մեջ երբեք մեծամասնություն չեն կազմել, և Հաբլակահ լեռնաշխարհում նրանց տիրապետությունը շի հանգեցրել ուրարտական ժողովրդի կազմավորմանը» (13, էջ 26):

Օրինավոր հարց է առաջանում, թե այդ «ուրարտներն» ինչպես ստեղծեցին ժամանակի մեծ տերություն, որ ո՛չ ժողովուրդ դարձան և ո՛չ էլ կարողացան ուրիշներին ձուլել, իսկ հետո իրենք ձուլվեցին հայերի մեջ: Եթե այդպես է, ապա ինչու նրանց չպետք է մտցնել հայկական կոմպլեքսի մեջ, հենց սկզբից նրանց չհամարել հայ ժողովրդի բաղադրատարր, Ուրարտուն էլ Հայաստան, պետությունն էլ ըստ էության հայկական: Չէ որ նրանք բնակչության փոքրամասնություն էին կազմում: Իսկ ովքե՞ր էին մեծամասնությունը: Այստեղ որոշ ուրարտագետներ գերադասում են նա՛խ թվարկել «հազար ու մի» ցեղեր և ապա՛ նշել նաև «մեծ թվով հայալեզու ցեղեր (ն. տ., էջ 27): Եթե անգամ ընդունենք, որ ուրարտները օտար էին, ապա պետք է հիշել, որ բնակչության մեծամասնությունը կազմում էին իրականում հայերը, որոնք էլ, նույնիսկ ճնշված վիճակում, ստեղծում էին երկրի նյութական ու հոգևոր բարիքները, վարում տնտեսությունը, կառուցում շինություններ, արարում կուլտուրական արժեքներ և այլն: Ուրեմն նրանց, հետևապես հիմնականում հայկական դրոշմն էր դրված տնտեսական ու կուլտուրական կյանքի վրա: Մինչդեռ «ուրարտապաշտները» բոլոր ճիգերով ձգտում են ժխտել այդ և ոչինչ կամ համարյա ոչինչ հայկական շտեմնել: Նրանք իրենց կանխակալ կաղապարով ամեն ինչ համարում են ուրարտական (ոչ հայկական) լինի դա բերդ, տաճար, գլխակ, խրճիթ, ջրանցք, կամուրջ, կարաս, բազմապիսի գործիքներ ու իրեր, կերպարձեւատի նմուշներ և այլն, և այլն:

Ահա ինչպես են նրանք «փաստարկում», թե Ուրարտուն Հայաստան չէ, առաջել ևս՝ հայկական պետություն, իբր դրա համար չկան լուրջ կոմպաններ: Իրականում դա ճիշտ չէ, քանի որ եղած համարյա բոլոր կոմպանները խոսում են հօգուտ նրանց: Փա ամենից առաջ տնտեսությունն է և շինարարությունը, ճարտարապետությունը: Ով է այն համարձակ գիտակը, որը եղած տվյալների (մեծ մասամբ պեղումների) հիման վրա

կարող է ասել, թե Ուրարտուի տնտեսութիւնն ու շինարարութիւնը չէին կարող տանել հայերը կամ դրանք իրր արմատականորեն տարբերվում են հետագայի (սկսած մ. թ. ա. VI դարից) հայկականից: Այդպես կարող են ասել ու տարբերութիւններ հնարել միայն կանխակալ մտածողները, որոնց համար կարևորը ոչ թե իրական փաստերն են, այլ դրանք նախօրոք մշակված կաղապարի («ուրարտական») մեջ մտցնելը: Նրանք գործում են հայտնի ասացվածքով՝ եթե փաստերը չեն համապատասխանում իրենց քարոզին, ավելի վատ դրանց համար: Ո՛չ, փաստերը համառ են և ոչ ոք չի կարող դրանք հերքել, մնում է դրանցից համապատասխան հետևութիւններ անել: Գլխավորն այն է, որ Ուրարտուն Արարատյան կամ Վանի թագավորութիւնն է, որտեղ եթե անգամ հայերը չէին իշխում, ինչպես նշում են «ուրարտապաշտները», միևնույնն է նրանք էին հիմնական արտադրողական ուժը և նրանց տնտեսական ու կուլտուրական գործունեութիւնը հետագա շրջանից տարբերվում է սոսկ զարգացման աստիճանով: Բնականաբար, դրութիւնն այդպես է թե՛ նյութական և թե՛ հոգևոր ոլորտներում, այդ թվում կրոնական հավատալիքներում: Ով ասաց, թե «օտար» ուրարտացիներին վերաբերող դիցաբանութիւնը չի կարող հայկական լինել: Այս և այլ բնագավառներում (այդ թվում թաղման ծեսերում և այլն) եղած տարբերութիւնները պետք է համարել միանգամայն բնական այն ժամանակվա նույնիսկ հայկական ցեղերի միջև, որոնք ցրված էին մեծ տարածքում (Հայկական լեռնաշխարհում) և հաճախ կտրված իրարից լեռներով ու ձորերով:

Նախօրոք թաթը դնել մ. թ. ա. IX—VII դարերում Հայկական լեռնաշխարհում թե Հայաստանում եղած ամենի վրա և տարիներ ու տասնամյակներ շարունակ թմբկահարել, թե դրանք «ուրարտական» են՝ ոչ հայկական իմաստով, հարցի կամայական լուծում է, որն ստացել է ինքնուրույն ուժ հատկապես նրանց համար, ովքեր կատարել են այդ արմատական սխալը և այժմ գիտական համարձակութիւն չունեն կանգնելու ճշմարիտ դիրքերի վրա: Չկա ավելի մեծ ստրկութիւն, քան համառելը սեփական սխալի մեջ: Զարմանալի չէ, որ բոլոր սկսողները, եթե նրանք չեն գտնվում «ուրարտապաշտների» ազդեցութեան տակ, հավատարիմ գիտական բարեխղճութեանն ու պատմութեան տրամաբանութեանը, անվերապահորեն կանգնում են հայկականութեան դիրքերի վրա, իսկ «հնե-րից» շատերն էլ վերանայում են իրենց հայացքները, բացի նրանցից, ովքեր իրենց գիտական կարիերան կառուցել են ոչ հայաստանյան Ուրարտուի վրա և այժմ սարսափում են դրա փլուզումից. մինչդեռ տանջանքով նվաճված ճշմարտութիւնն ասելն ամենամեծ սխրագործութիւնն է:

Անդրադառնալով Ուրարտուի քաղաքական կյանքին, նրա պետակա-

նության հարցին, պետք է շեշտել, որ այստեղ էլ «ուրարտապաշտնեւրի» դիրքերը գնալով ավելի և ավելի են թուլանում: Բավական է նշել, որ եթե նախկինում ուրարտական բոլոր թագավորները գլխովին համարվում էին «օտար» (ոչ հայկական իմաստով), ապա այժմ նույնիսկ «ուրարտապաշտներին» ոմանք գտնում են, որ, օրինակ, Արամեն («Ուրարտուի» առաջին թագավորը), Մենուան և Ռուսա III էրիմենը հայեր էին և հավանաբար Հայաստանում հաստատված էր սոսկ այսպես կոչված «ուրարտական» հարստութուն (դինաստիա), որի մեջ կային «ուրարտներ» (ոչ հայեր) և հայեր: Կասկած չկա, որ հետագա հետազոտությունները կտան ավելի բարերար արդյունքներ և ավելի կամրապնդվի հայկական նության ըմբռնումը Ուրարտուի վերաբերյալ:

Առավել դժվարինը համարվում է լեզվի հարցը, քանզի «Ուրարտուում» հայտնաբերված սեպագրերն ունեն աքքադական (ասուրաբելական) ծագում: Բայց դրանցով կազմված արձանագրությունները (մեծ մասամբ թագավորների նվաճումների ու շինարարական գործերի մասին) խիստ սխեմատիկ են ու միօրինակ, նվազագույն բառապաշարով (մոտ 350 բառ) ու պարզունակ քերականական կառուցվածքով, ուստի և այդ օտար գրավոր լեզուն եղել է սոսկ արքունական կամ դիվանային կառավարչական լեզու, իսկ բնակչության հաղորդակցման միջոցը եղել է հայերենը: Պատահական չէ, որ Մուսես Խորենացու վկայությամբ, Արամ թագավորը, նոր նվաճումներ կատարելուց հետո, «բնակիչներին հրաման է տալիս սովորել ու խոսել հայերեն» (5, էջ 109): Քանի որ հայերը դեռ գիր չունեին, ուստի օգտագործում էին աքքադական սեպագրերը (հարմարեցված տեղական պայմաններին) որպես կառավարման լեզվամիջոց, բայց ժողովրդական հաղորդակցման բանավոր լեզուն հայերենն էր: Հայտնի է նաև, որ հետագայում էլ, քանի որ չկար հայկական այբուբենը, բայց լիովին ձևավորված էր հայ ժողովուրդը և վստահորեն առաջադիմում էր, հայկական պետության արքունիքի պաշտոնական արձանագրությունների համար օգտագործվել են արամեերենը և հունարենը: Դա, իհարկե, չի զարմացնում «ուրարտապաշտներին», բայց նրանք մերժում են աքքադական սեպագրերի օգտագործման հնարավորությունը «Ուրարտուի» սոսկ արքունիքում: Պարզ է, որ այստեղ ևս նրանք դեմ են գնում իրերի տրամաբանությանը: Սխալ տեսակետի դոգմայացումը չի կարող նման հետևանքներ չունենալ...

«Ուրարտապաշտները» Ուրարտուն Հայաստան շեն համարում նաև այն փաստարկումով, որ նրա լեզուն չի համապատասխանում հնդեվրոպական հայերենին: Բայց արդեն նշեցինք, որ հիմնականում տարածված էր հայերենը, իսկ սեպագիր «ուրարտերենը» օտարամոտ է և գրա-

վոր-կառավարչական նեղ շրջանակների համար, թեև նույնիսկ այդ գեպքում լայն տարածում ունեցող հայերենը լուրջ ազդեցություն է ունեցել նրա վրա և սեպագիր «ուրարտերենը» հայերենի միջոցով յուրացրել է բավականաչափ հնդեվրոպական բառեր: Թող լինի նաև փոխազդեցություն, որի համար հնդեվրոպականությունը չի կարող արգելք լինել: Կարծում ենք, որ այստեղ էլ հետագա ուսումնասիրությունները կլինեն ավելի արդյունավետ և բոլորովին էլ հարկ չկա ստեղծել արհեստական անջրպետներ:

Ուրարտուի Հայաստան լինելը հաստատվում է նաև մի այնպիսի պատմական վավերագրով, ինչպիսին է Բեհիսթունյան արձանագրությունը, որը պարսից թագավոր Դարեհ Ա Վշտասյանը (522—489) իր իշխանության սկզբին փորագրել է տվել բարձրագույն ժայռի վրա (այժմյան Քերմանշահ քաղաքից ոչ հեռու): Այն եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և աքքադերեն) սեպագիր արձանագրություն է միևնույն բովանդակությամբ (Դարեհի մասժ ւլատերադաների մասին): Այնուեղ բազմիցս հիշատակվում է Դարեհի դավթումներին բիմարող Հայաստանը՝ հին պարսկերեն լեզվով Արմինա, էլամերեն՝ Հարմինույա և աքքադերեն Ուրաշու (Ուրարտուի արտասանությունը աքքադերենի բարեղոյան բարբառով) անուններով: Հարմինույան փաստորեն Արմինայի տարբերակն է և միաժամանակ բոլոր երեքը համազոր են ու նույնական: Ուստի այստեղ էլ լիակատար հիմք կա ասելու, որ Ուրարտուն (Ուրաշու) դա Հայաստանն է (Արմինան): Մինչդեռ «ուրարտապաշտներն» այդ արձանագրությանը տալիս են յուրահասուկ (իրենց համար ձեռնառու, այսինքն՝ իրենց իսկ ստեղծած կազապարին համապատասխան) մեկնաբանություն. Ուրարտու (Ուրաշու) անունն անցյալի հուշ է մ. թ. ա. IX—VII դարերի պետության մասին, իսկ Արմինան վերաբերում է միայն նրանից հետո ստեղծված հայկական պետությանը և իբր այդ անցման պահը հաջողությամբ «որսացվել է» ու արտացոլվել արձանագրության մեջ:

Մինչդեռ Բեհիսթունի արձանագրությունը պետք է կարդալ այնպես, ինչպես գրված է: Բոլոր դեպքերում խոսքը Հայաստանի մասին է, ընդ որում աքքադերեն շարունակում են ավանդաբար այն կոչել Ուրարտու (Ուրաշու), իսկ հին պարսկերեն՝ ինչպես միշտ Արմինա, որը վաղ ժամանակներից եկող Արմանիի, Արմենիի տարբերակն է:

Բնորոշ է նաև, որ հայ, ինչպես նաև հույն, ասորի պատմիչների մոտ չի հիշատակվում Ուրարտուն, թեև նրանք խոսում են նույնիսկ ավելի վաղ ժամանակների իրադարձությունների մասին: Ուրարտուի

փոխարեն հայ պատմիչները հիշատակում են Արարատու երկիր, Արա-
հաղայ երկիր, Արարատեան քաղաքուրութիւն: Անշուշտ, սա ևս ուղղակի
վկայութիւնն է Ուրարտուն իրոք Հայաստան կոչելու, այն համարելու
Արարատյան թագավորութիւն: Մինչդեռ «ուրարտապաշտները» հաշի
չեն նստում նաև այս երևույթի հետ, այսինքն՝ թե ինչու մեծահարուստ
հայ պատմագրութիւնը ոչ մի տեղեկութիւն չի հաղորդում համեմատու-
բար ժամանակագրորեն ոչ այնքան հեռու «օտար» Ուրարտուի մասին,
երբ այնտեղ խոսք կա նույնիսկ հազարամյակների պատմութեան, այդ
թվում Հայկի ու Բելի կովք մասին: Անտեսել այդպիսի իրողութիւնը
կամ զավեշտով «փածկել» այն, թե հայ պատմիչները հանդես են եկել
հետո և չէին կարող գրել Ուրարտուի մասին, համոզիչ չէ, քանի որ Մով-
սէս Խորենացին և ուրիշներ իրոք գրել են թե՛ ավելի վաղ իրադարձու-
թիւնների և թե՛ «Ուրարտուի» ժամանակաշրջանի մասին՝ բայց հայ-
կական բովանդակութեամբ և դա միանգամայն ճիշտ է:

Հայաստայի, Նախիբի և Ուրարտուի պատմութիւնները վկայում են,
որ դրանք գտնվել են Հայկական լեռնաշխարհում և, շնայած բոլոր սր-
հավիրքներին (պատերազմներ և այլն), իրենց էութեամբ ունեն հայկա-
կան բնույթ: Ուստի, կարծում ենք պետք է վերանայել հայ ժողովրդի
կազմավորման, հայկական պետութեան առաջացման, Հայաստան երկրի
վերաբերյալ մինչ այժմ եղած հասկացութիւնների շրջագծերն ու ժա-
մանակաշրջանները: Դրանք պետք է հետ տարվեն ու խարսխվեն նաև
Հայաստայի ու Արարատյան թագավորութեան («Ուրարտու») վրա: Հենց
այդ տեսանկյունից էլ ճիշտ չէ հայ ժողովրդի ու նրա պետականութեան,
բուն Հայաստանի պատմութիւնն սկսել Երվանդունիների թագավորու-
թիւնից (այսինքն՝ մ. թ. ա. VI դարից), առավել ևս սխալ է հայ ժո-
ղովրդի կազմավորման ավարտը հասցնել մինչև մ. թ. ա. II դարը:

Ամփոփելով, կարելի է ասել, որ այժմ արդեն բավականաչափ խախտ-
վել են «ուրարտապաշտութեան» դիրքերը հօգուտ հայկականի: Վեր-
ջինիս մասին նախկինում նույնիսկ խոսք չկար, իսկ ներկայումս «օտար»
Ուրարտուն ողողվում է հայկականութեամբ և նույնիսկ «ուրարտապաշտ-
ները», անհրճելի փաստերի ճնշման տակ ու երկյաղելով սեփական ժո-
ղովրդի արդար ցատուսից, հարկադրված են այս կամ այն շափով հար-
մարվել նոր հովիտին: Փասկած չկա, որ այսուհետև էլ մանրագնին հե-
տազոտութիւններն ու պատմական ողջամտութիւնը կրերեն նորանոր
հայանպաստ գիտական արդիւնքներ և մեկընդմիջտ վերջ կտրվի «ուրար-
տապաշտների» ահազոր «առաքելութեանը»՝ արհեստականորեն «ազա-
ցուցել», որ Ուրարտուն Հայաստան չէ, ասել է թե՛ Հայաստանը Հայաս-

տան չէ ոչ միայն աշխարհագրական առումով, այլև ըստ էության... Դա նշանակում է ծառս լինել իրական պատմության դեմ և ակամայից ջուր լցնել Բուրբուկան ու այլ կեղծարարների ջրաղացին:



Հայկական լեռնաշխարհը, Հայաստանը եղել է այն բնական միջավայրը, որտեղ ձևավորվել ու գործել է հայ ժողովուրդը: Հիրավի, ինչպես նշել է Կ. Մարքսը, ամեն մի պատմագրություն էլ ամենից առաջ պետք է ելնի տվյալ երկրի ու ժողովրդի բնական պայմաններից և այն փոփոխություններից, որոնք տեղի են ունենում «մարդկանց գործունեության շնորհիվ» (1, հ. 3, էջ 19): Անշուշտ, բնության մեծագույն արգասիքը մարդն է, որի գործունեությունը ծավալվում է որոշակի աշխարհագրական միջավայրում: Այն ոչ մի ժողովրդի, այդ թվում նաև հայերի, կյանքում վճռական դեր չի կատարել, բայց տարբեր է նրա ազդեցության ստիճանը զանազան ժողովուրդների մոտ: Ընդհանրապես ականառու է աշխարհագրական միջավայրի կարևոր դերը մարդկային հասարակության կյանքում, բայց, ինչպես նշել է գերմանացի մեծ փիլիսոփա Հեգելը, «կարիք չկա ո՛չ շահագանցել, ո՛չ էլ նսեմացնել բնության նշանակությունը, հոնիական մեղմ կլիման, իհարկե, շատ է նպաստել Հոմերոսի պոեմների նրբագեղությունը, բայց միայն կլիման չի կարող Հոմերոսներ ծնել և միշտ չէ, որ ծնում է նրանց, Թուրքերի տիրապետության տակ ոչ մի երգիչ հանդես չի եկել» (20, էջ 76):

Կարելի է ասել, որ հայ ժողովրդի կյանքում համեմատաբար ուժեղ է եղել աշխարհագրական միջավայրի ազդեցությունը: Ամենից առաջ պետք է նկատի ունենալ լեռնաշխարհի բարդությունն ու բազմազանությունը, որոնք նպաստել են հայ ժողովրդի մեջ զարգացնելու բազմապիսի ընդունակություններ և սովորելու նույնիսկ «քարից հաց քամելու» արվեստը, ավելի եռանդով զբաղվելու շինարարությամբ ու գիտությամբ. «Ոչ թե հողի բացարձակ պտղաբերությունը, այլ նրա տարբերացումը (դիֆերենցումը), նրա բնական արդյունքների բազմազանությունն է կազմում աշխատանքի հասարակական բաժանման բնական հիմքը. շնորհիվ այն բնական պայմանների փոփոխության, որոնց մեջ մարդն ապրում է, տեղի է ունենում նրա սեփական պահանջմունքների, ընդունակությունների, աշխատանքի միջոցների ու եղանակների բազմացում» (1, հ. 23, էջ 522):

Անհրաժեշտ է նշել նաև, որ Հայաստանը, գտնվելով Արևելքի ու Արևմուտքի սահմանագծին, կամ, ինչպես հաճախ է ասվում, պատմու-

164799

թյան քառուղիներում, կարևոր դեր է կատարել ժողովուրդների կյանքում, նրանց փոխառնչությունների ու միջազգային առևտրի ասպարեզում: Պատահական չէ, որ Հայաստանը արտացոլվել է ոչ միայն զանազան ժողովուրդների հնագույն պատմիչների երկերում, այլև շատ վաղեմի քարտեզներում, ինչպիսիք են հույն հեղինակ Հեկատեոս Միլեթացու Աշխարհի քարտեզը (մ. թ. ա. VI դար), Աշխարհի Բաբելոնյան քարտեզը (մ. թ. ա. V դար) և այլն: Միաժամանակ Հայաստանը՝ իր ռազմաստրատեգիական դիրքով ու տնտեսական շահավետությամբ համարյա մշտապես դարձել է կովախնձոր բազմաքանակ զավթիչների համար, եղել անվերջ պատերազմների թատերաբեմ, որի հետևանքով շատ է հեղվել անմեղ հայ ժողովրդի արյունը, իսկ նրա երկիրն էլ բզկտվել ու ավերվել: Կործանարար հողմերի նման Հայաստանով են անցել օտարերկրյա բարբարոսական ցեղերը, պարսկական, բյուզանդական, արաբական, սելջուկ-թուրքական, մոնղոլա-թաթարական և այլ նվաճողներ:

Չնայած այդ ամենին, հայ ժողովուրդը երբեք չի կորցրել իր ոգու արիությունը և ոչ միայն անձնվեր պայքարով պաշտպանել է իր գոյությունն ու հայրենիքը, այլև ցուցաբերել բացառիկ կենսունակություն, տոկացել ու առաջ ընթացել, ժամանակին ստեղծել ինքնուրույն պետականություն, մշակույթի հրաշալի կոթողներ, որոնք հարստացրել են համաշխարհային քաղաքակրթությունը: Բրյուսելի Աշխարհագրական ընկերության նախագահ և ռուսական կայսերական աշխարհագրական ընկերության անդամ Ժյուլ Լեկլեկը, մոտիկից ծանոթանալով հայոց պատմությանը և XIX դարի վերջին լինելով Հայաստանում, գրել է. «Հայ ժողովուրդը հնագույնն է աշխարհում և ամենակենսունակը (ամենադիմացկունը), նրա հրաշալի հատկանիշն է կայունությունը, որը չկարողացավ ճզմել ինքը՝ ամենակազմալուծող ժամանակը» (35, էջ 39):

Հազարամյակների ճանապարհ է անցել հայ ժողովուրդը: Նրա ուղին եղել է դժվարին, բայց և արգասավոր ու հերոսական: Նրանով հետաքրքրվել են մարդկության լուսավոր մտքերը և շեշտել, որ աշխարհի ժողովուրդների ծաղկեփնջում իր արժանի ու պատվավոր տեղն ունի հայ ժողովուրդը: Ռուս ակադեմիկոս գրող ու գիտնական Վ. Յու. Բրյուսովը, խորանալով հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության մեջ, նշել է. «Ես համոզվել եմ, որ հայերի ճակատագրում դրված է համընդհանուր պատմության ամենանշանավոր էջերից մեկը, որը նոր լույսով է լուսավորում պատմագիտության մի շարք հարցեր... Հայաստանի պատմությունն արժանի է նույնպիսի ուշադրության, ինչպիսին ամենանշանավոր ժողովուրդների պատմությունը, որոնք իրենց ինքնուրույն ավանդն են մտցրել մարդկության մշակույթի մեջ, չբացառելով, ո՛չ եգիպտացիները:

րին, ո՛չ հույներին, ո՛չ հռոմեացիներին, ո՛չ արգի Եվրոպայի ժողովուրդներին» (23, էջ 1—2)։ Նշանավոր գիտնական Ն. Աառք շեշտել է. «Հայոց ազգը բոլոր համամարդկային աղբյուրից բխած հույտուրական ավանդի անդրաժեղ ժառանգներից լինելով, նրա ամբողջությունը հույտարիմ պահողը, աճեցնողն ու առատաձեռն ցանողն էր Արեւելքում և Արեւմուտքում... Հարձան ու միջն է անգամ հեռու ընկած աղբերից ս՞րն է, որ ազտված շիինք հայոց ազգի հույտուրական բարեմասնություններից» (14, 1987, № 9, էջ 26)։

Այնուամենայնիվ, հայ ժողովրդի բնականոն վերընթաց ուղին հաճախ է խաթարվել օտարերկրյա նվաճողների կործանարար արշավանքներով։ Նա շատ արհավիրքներ է տեսել, որոնց մեջ ամենազարհուրելիին թուրքականն էր։ Պատմական գառը ճակատագրով հայ ժողովուրդը դժբախտություն ունեցավ ընկնելու թուրքական դաժան տիրապետության տակ և դարեր շարունակ մաքառելու նրա գեմ։ Սկզբում ստեղծվեց սելջուկ-թուրքերի իշխանությունը և այս օսմանյան բռնակալությունը, որը ժողովուրդների բանտ էր, բանտերի մեջ բանտ։ Կ. Մարքսը, անդրադառնալով XIII դարի 30-ական թվականներին, գրել է. «Թուրք-օսմաններին հորդան մուտք է գործում Փոքր Ասիա, որտեղ նրանք ամենից առաջ հիմնում են Կարահիսարի ավազակային պետությունը» (2, հ. V, էջ 223)։ Հենց այդ ավազակային պետությունն էր, որը գնալով ավազակաբար ընդլայնվեց և դարձավ օսմանյան ավազակաբարո կայսրություն։ Դա ճիշտավոր բռնակալություն էր, Կ. Մարքսի արտահայտությունը, «Ֆեոդալիզմի ամենաստորին ու բարբարոսական աստիճանի վրա գտնվող» «իսկական ռազմական տերություն» (2, հ. 6, էջ 189), «ամենարարբարոսական բռնակալությունը» (1, հ. 26, էջ 311), որը դարձավ «լուրջ արգելք... առաջագիմության համար» (1, հ. 9, էջ 259)։

Օսմանյան կայսրության կառավարման հիմքում ընկած էին բրոնությունը, շովինիզմը (օսմանիզմ, թուրքիզմ, պանիսլամիզմ, պանթյուրքիզմ, թուրամիզմ) և կրոնական ֆանատիզմը։ Սուլթաններն ու նրանց աստիճանավորները գործում էին Ղուրանի ոգով, իսկ «Ղուրանը և գրավրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունն ամբողջ աշխարհի ժողովուրդների աշխարհագրությունը և ազգագրությունը հանդիցնում են երկու մասի բաժանելու հասարակ ու հարմար ֆորմուլի, այսինքն՝ ուղղահավաստների ու անհավաստների։ Անհավատը՝ դա «գյավուր է», դա թշնամի է։ Իսլամը նզովում է անհավատների ազգը և մշտական թշնամական վիճակ ստեղծում մուսուլմանների ու անհավատների միջև» (1, հ. 10, էջ 169)։

Թուրք նվաճողները հանգես էին գալիս որպես ռազմական դաժան

օկուպանտներ, որոնք վարում էին պարագիտային կյանք և տնլուր ճրնշման ենթարկում հպատակեցված ժողովուրդներին (հույներին, հայերին, վրացիներին, սլավոններին, արաբներին և այլն), ստրկացնում, կեղեքում ու բնաջնջում նրանց: Ֆ. Էնգելսը նշել է, որ եթե թուրքերը «չունենային քաղաքացիական ու զինվորական պաշտոնների մենաշնորհ, նրանք շուտով բոլորովին կանհետանային» (1, հ. 2, էջ 25):

Բայց դժբախտաբար, կար այդ շարիքը և Մարքսն ու Էնգելսը թուրքական բռնակալությունը համեմատել են սատկած ձիու նեխած լեշի հետ, որը գարշահոտություն է տարածում շորս կողմը և պետք էր հիմնովին վերացնել այն: Նրա պահպանման ամեն մի փորձ «հին ֆիլիստերական անմտություն է» և «հին դիվանագիտական ստորություն» (1, հ. 28, էջ 17):

Վ. Ի. Լենինը ևս խորապես դատապարտել է «բռնապետական Թուրքիան» (3, հ. 17, էջ 229), այդ «ամենարարքարոսական բռնակալությունը» (3, հ. 26, էջ 379), որտեղ «ժողովուրդը քաղաքական ստրկության մեջ է մնում սուլթանի կառավարության ձեռքին», որտեղ «դեռ մնացել են խայտառակ օրենքներ ընգզեմ ուրիշ հավատի մարդկանց» (3, հ. 7 էջ 170, 219): Նա Թուրքիայի պատմությունը դիտում է որպես «տևական, տանջալից անկում և քայքայում, տանջալից՝ մանավանդ ժողովրդի բոլոր աշխատավոր մասսաների համար»: (3, հ. 10, էջ 373): Վ. Ի. Լենինը հետամնաց տնտեսակարգի վատթարագույն տիպար է համարում թուրքականը և գրում. «Դա բուրևերեն է: Դա նորտատիրական է» (3, հ. 23 էջ 339):

Հիրավի, օսմանյան կայսրությունը բիրտ բռնակալության և հետամնացության մարմնացում էր: Դրավելով բազմաթիվ զարգացած, մասնավորապես քրիստոնեական բնակչություն ունեցող երկրներ, թուրքական վայրի ցեղերն ամենուրեք հաստատում էին իրենց իշխանությունը՝ բնաջնջելով կամ դուրս մղելով նախկին տերերին: Խավարամիտ մուսուլմանական մարդասպանները դառնում էին երկրի կառավարողներ: Սուլթանից մինչև թուրքական վերջին աստիճանավորը գործում էին Ղուբանի ու շարիաթի օրենքներով, այսինքն՝ անխնա կեղեքում ու կոտորում էին ոչ մուսուլմաններին, «գյավուրներին», զբաղվում կողոպուտով, կաշառակերությունով, ավերում դարերով ստեղծված բազմաքանակ կոթողներ: Կառավարման ու բարբերի քաղաքակիրթ ձեերը հակացույական էին հետամնաց թուրքերի համար: Ամեն մի նման նորամուծություն անընդունելի էր նրանց համար: Սուլթան Մահմուդի փորձը՝ յալաթը փոխարինել կոստյումով, նրան տվեց Սուլթան-գյավուր մականունը, իսկ Աբդուլ-Մեջիդն արժանացավ պարսազանքի, երբ նկարչին

պատվիրեց նկարելու իր դիմանկարը: Դրանք դիտվում էին որպես քրիստոնեանության հաղթանակ իսլամի դեմ:

Քոչվորական ու խաշնարած մուսուլմանական ցեղերը ողողեցին քրիստոնեական երկրները և խափանեցին նրանց տնտեսության առաջընթացը: Նախկինում զարգացած գյուղատնտեսություն ունեցող այդ երկրները վերածվեցին քոչվորների ու հովիվների անասնապահական տարածքների, որոնք արագությամբ մերկանում էին ու ենթարկվում էրոզիայի: Տեղի էր ունենում բնության, մարդու բնական միջավայրի, հողի վայրի, գեղատիչ շահագործում և դրանց կազմալուծում ու անկում:

Այդպես էր հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, երբ օսմանյան բռնի տիրապետությամբ փաստորեն դարձ էր կատարվում դեպի բարբարոսությունը, դեպի հեռավոր անցյալի վայրենության շրջանը: Կոստանդնուպոլսի «Արևելքի և Արևմուտքի միջև այդ ոսկե կամրջի» (1, հ. 9, էջ 240) գրավումը թուրքերի կողմից (1453 թ.) ու նրանց հետամնաց վրանաբնակության տարածումը նախկին բյուզանդական կայսրության տարածքում և այլուր մեծ հարված հասցրին եվրոպական ու ասիական բազմաթիվ երկրների տնտեսության ու մշակույթի զարգացմանն ընդհանրապես, նոր ծավալվող Վերածնությանը՝ մասնավորապես: Թուրքական վայրենությունն ու հետամնացությունն անհամատեղելի էին Վերածնության դարաշրջանի առաջավոր գաղափարների հետ: Օսմանյան կայսրությունում դրանց կրողներն էին զարգացած քրիստոնյա ժողովուրդները, նրանց կրթված, լուսավորյալ զավակները, որոնք սակայն հալածվում էին ու ոչնչացվում: Սուլթանական հակաքրիստոնեական ու հակալուսավորչական քաղաքականությունը փակում էր եվրոպական առաջադիմության ուղին, երկիրը մատնում հետադիմության, լճացման ու կործանման:

Հիմնովին ճշմարիտ է սովետական պատմագիտության այն տեսակետը, որ «թուրքական լծի տակ ընկած բալկանյան, կովկասյան, արաբական և այլ ժողովուրդների համար այն հանդիսացավ պատմական աղետ՝ երկար ժամանակ կասեցնելով նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման պրոցեսը» (17, էջ 544):

Հրով ու սրով, յաթաղանով ապրող հետամնաց թուրքերը, անընդհատ վազվզելով կոտորածի ու կողոպուտի հետևից, երկար ժամանակ չէին դառնում կայուն հավաքականություն, ժողովուրդ: Նրանց միավորողը կրոնական ֆանատիզմն էր, շովինիզմը, բռնությունը, թալանի մոլուցքը, ուրիշի հաշվին ապրելը: Ռուս ականավոր մտածող, հեղափոխական-դեմոկրատ Ն. Գ. Զեռնիշևսկին, իրականությանը համապատասխան, գրել է. «Թուրքերն ապրել են միայն նվաճումների հաշվին, սահմանների ըն-

զարձակումը նրանց միակ նպատակն էր», և նրանք մտածում էին սոսկ «կողոպուտի, հարկերի բռնազանձման ու գերիշխանության հաստատման մասին (21, էջ 182): Բուլղարացի հայտնի պատմաբան Ն. Տ. Թողորովը ճիշտ է նշել, որ օսմանյան կայսրությունում «տիրապետող ժողովուրդը դուրս էր մնում արտադրողական ուժերի ընդհանուր զարգացումից» (30, էջ 410): Արտադրողական ուժերը կազմում էին հպատակեցված ժողովուրդները:

Վերջիվերջո թուրք ժողովուրդը կազմավորվեց Փոքր Ասիայում, երբ եկվոր թուրքերը բռնի ասիմիլյացիայով (թուրքացնելով) իրենց ձուլեցին տեղաբնիկ քրդերի, արաբների ու քրիստոնյա բնակչության մի մասին: Այդ պրոցեսը տևական էր և ավարտվեց XVI—XVII դարում, լսել թուրք ազգը ձևավորվեց ավելի ուշ՝ «XX դարի առաջին տասնամյակներին» (16, հ. 14, էջ 532):

Անհերքելի է բազմաթիվ կուլտուրական ժողովուրդների սոցիո-կուլտուրական թուրքերի վրա թե՛ անցյալում և թե՛ ներկայումս: Այդ մասին է վկայում նաև այն իրողությունը, որ այժմ Թուրքիայում հաշվվում են մոտ 20 հազար արական և իգական անուններ: Հազիվ թե աշխարհում գտնվեն այդպիսի շատ երկրներ: Բայց պարզվում է, որ այդ 20 հազար անուններից բուն թուրքական են միայն մոտ երկու հազարը: Նույնիսկ թուրքական «Միլլեթ» թերթն այդ երևույթը բացատրում է նրանով, որ «անունների ճնշող մեծամասնությունը հանդիսանում է այն ժողովուրդների վիթխարի պատմական անցյալի ժառանգությունը, որոնք բնակեցված են եղել այժմյան Թուրքիայի և հարևան պետությունների տարածքում: Իր կնիքն է դրոշմել նաև ժամանակակից քաղաքակրթությունը (41, 8. 3. 87): Դե՛ ինչ, կարելի է համաձայնվել այս եզրակացության հետ: Նշանավոր ռուս թուրքագետ Վ. Ա. Դորդլևսկին նշել է, որ դարեր շարունակ «թուրքերի մոտ մայրենի լեզուն, ավելին՝ հայրենի երկիրը մատնված են եղել անուշադրության» և նրանք «սնվել են ուրիշների կուլտուրական ավանդույթներով» (24, հ. 3, էջ 287):



Թուրքական արյունոտ լծի դեմ խոր ատելությամբ ու դայրույթով են խոսել ճնշված ժողովուրդների ներկայացուցիչները: Այդպես, բուլղար հեղափոխական գործիչ ու նշանավոր բանաստեղծ Խրիստո Բոտևը (1849—1876) նշել է. «Թուրքը մինչև այժմ մի հարբած գազան է, և ինչ էլ ուզում ես դու նրան ասա, նա միշտ քեզ կնայի արյունալից աչքերով և կմտածի այն մասին, թե ինչպես խժռի քեզ» (28, էջ 321): Արաբ գյու-